<p>“Loan” means the maximum</p>	<p>«Փոխառություն» սույն պայմանագրի 3.01. կետով սահմանված առավելագույն մայր գումարը: «Փոխառություն պայմանագիր» հավաքական իմաստով՝ (a) 1-ին Փոխառության պայմանագիրը, և (b) 2-րդ Փոխառության պայմանագիրը:</p>

<p>principal amount provided under Section 3.01. of this Agreement.</p> <p>“Loan Agreements” means collectively:</p> <p>(a) the 1st Loan Agreement, and</p> <p>(b) the 2nd Loan Agreement.</p>	<p>«Անցանկալի էական ազդեցություն» անցանկալի էական ազդեցություն</p> <p>(a) սույն Պայմանագրով և Ֆինանսավորման պայմանագրերով (որի կողմ է հանդիսանում Փոխառուն) սահմանված նյութական պարտավորությունների կատարմանը կամ համապատասխանությանն ուղղված Փոխառուի կարողության վրա, ինչպիսին է կուտակված պարտքերը վճարելու անկարողությունը,</p>
<p>“Material Adverse Effect” means a material adverse effect on:</p> <p>(a) the ability of the Borrower to perform or comply with any of its material obligations under this Agreement and Financing Agreements (to which the Borrower is a party), such that it is unable to pay its debts generally as they come due;</p> <p>(b) the legality, validity or enforceability of the security created pursuant to the Security Documents or the legal rights, remedies and priorities of the Lender under this Agreement; or</p> <p>(c) the Borrower's business, operations, property, financial condition or business prospects.</p>	<p>(b) համաձայն պարտավորությունների կատարման համար ապահովման փաստաթղթերի սահմանված ապահովման միջոցների կամ Փոխատուի սույն Պայմանագրով սահմանված օրինական իրավունքների, գերակայությունների և իրավական պաշտպանության միջոցների օրինականության, վավերականության կամ հարկադիր բռնագանձման վրա :</p> <p>(c) Փոխառուի գործունեության, աշխատանքների, գույքի, ֆինանսական դրության կամ զարգացման հեռանկարների վրա:</p> <p>«Ծրագիր» նշանակում է</p> <p>(a) Հայաստանում «ՔննթուրԳլոբալ Հիդրո Կասկադի (Որոտան) Հիդրէլեկտրակայանների վերագինում» նախագծի ֆինանսավորում (Փոխառության I և II մասերով), և</p> <p>(b) մեկ կամ ավելի Արտահանման պայմանագրերի հիման վրա մատակարարվող ապրանքների և ծառայությունների ֆինանսավորում:</p>
<p>“Project” means each of the following:</p> <p>(a) financing the rehabilitation of the “Refurbishment of the CGHC (Vorotan)</p>	<p>«Ծրագրային պայմանագրեր» նշանակում է</p> <p>(a) Արտահանման պայմանագրեր, և</p> <p>(b) Ծրագրի պայմանագիր:</p>

<p>Hydro Power Plants” in Armenia (for the Portion I and Portion II of the Loan), and</p> <p>(b) financing of supplies and services on the basis of one or more Export Contracts (for the Portion III).</p> <p>“Project Agreements” means each of the following:</p> <p>(a) the Export Contracts; and</p> <p>(b) the Project Contract.</p> <p>“Project Contract” means an agreement to be entered into by and between the KfW and the Borrower, pursuant to section 11.2. of each of the Loan Agreements.</p> <p>“Repayment Schedule” means a schedule for repayment of the Loan as provided under Schedule B hereof.</p> <p>“Security Documents” means security agreements to be entered into with the Borrower and “Vorotan Holding” s.a.r.l. in connection with the other Financing Agreements.</p> <p>“Subordination Event” means each of the events provided under Section 4.01, 4.02. and 4.03 of the Intercreditor Agreement.</p>	<p>«Ծրագրի պայմանագիր» Փոխառուի և KfW-ի կողմից և միջև կնքման ենթակա պայմանագիր ըստ յուրաքանչյուր Փոխառության պայմանագրի 11.2. կետի:</p> <p>«Փոխառություն գումարի մարման ժամանակացույց» Փոխառություն գումարի մարման ժամանակացույցն ըստ սույն Պայմանագրի ժամանակացույց B-ի:</p> <p>«Պարտավորությունների կատարման համար ապահովում տրամադրելու վերաբերյալ փաստաթղթեր» Փոխառուի և «Որոտան Հոլդինգ» ՍՊԸ հետ կնքման ենթակա այլ Ֆինանսական պայմանագրերին առնչվող Պարտավորությունների կատարման համար ապահովում տրամադրելու վերաբերյալ համաձայնագրեր:</p> <p>«Ենթակարգության դեպք» Միջպարտատիրական պայմանագրի 4.01, 4.02. և 4.03 կետերում նշված դեպքերից յուրաքանչյուրը:</p> <p>«Հարկ» օրենքով սահմանված ցանկացած հարկ, ռոյալթի, կնիք կամ այլ պարտավորություն, գանձվող վճար կամ պարտադիր վճարման ենթակա ցանկացած այլ գումար կամ վճար, ավելացված արժեքի հարկ, կամ նմանատիպ պարտադիր վճարներ (այդ թվում՝ դրանց նկատմամբ հաշվարկվող տույժերը կամ տուկոսները):</p>
--	--

<p>“Tax” means any tax, royalty, stamp or other duty, assessment, levy, charge, value added tax, or impost of similar nature (including any related penalty or interest) imposed under any law.</p> <p>Section 1.02. Interpretation</p> <p>In this Agreement:</p> <p>(a) unless the context otherwise requires, words denoting the singular include the plural and vice versa;</p> <p>(b) reference to a specified Article, Section or Annex shall be construed as a reference to that specified Article, Section or Annex to this Agreement;</p> <p>(c) a reference (i) to an amendment or to an agreement being amended includes a supplement, variation, assignment, novation, restatement or re-enactment, and (ii) to an agreement shall be construed as a reference to such agreement as it may be amended from time to time;</p> <p>(d) the headings and the Table of Contents are inserted for convenience of reference only and shall not affect the interpretation of this Agreement;</p> <p>(e) "control" (including, with correlative meanings, the terms "controlled by" and "under common control with"), as used with respect to any person, means the possession, directly or indirectly, of the power to direct or cause the direction of the management and policies of such person, whether through the ownership of</p>	<p>Կետ 1.02. Մեկնաբանություն</p> <p>Սույն Պայմանագրում՝</p> <p>(a) եզակի արտահայտված բառերը կարող են ներառել հոգնակի իմաստ և հակառակը, եթե համատեքստն այլ բան չի պահանջում,</p> <p>(b) հղումը որևէ հոդվածի, կետի կամ հավելվածի համարվում է հղում սույն Պայմանագրի կոնկրետ հոդվածին, կետին կամ հավելվածին,</p> <p>(c) հղումը (i) փոփոխության կամ փոփոխման ենթակա համաձայնության, որը ներառում է լրացում, տարբերություն, իրավունքի փոխանցում, հին պայմանագիրը նորով փոխարինում, վերհաստատում կամ օրենսդրության փոխանցում, և (ii) որևէ համաձայնագրի ընկալվում է որպես հղում այդ համաձայնագրին ժամանակ առ ժամանակ կատարվող բոլոր փոփոխություններով հանդերձ,</p> <p>(d) վերնագրերը և Բովանդակությունը տեղ են գտել հարմարության համար միայն և ոչ մի կերպ չեն ազդում սույն Պայմանագրի մեկնության վրա,</p> <p>(e) «վերահսկողություն» բառը (ինչպես նաև համարժեք իմաստով տերմինները՝ «ինչ-որ մեկի կողմից վերահսկվող» և «ընդհանուր վերահսկողության ներքո») որևէ անձի կապակցությամբ օգտագործված լինելու դեպքում նշանակում է տվյալ անձի կառավարման և գործունեության ուղղությունները որոշելու վրա ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցություն ունենալու հնարավորություն՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հնարավորությունը ծագում է քվեարկող արժեթղթերի սեփականատեր լինելու հանգամանքից, թե՛ պայմանագրից, թե՛ այլ հիմքից:</p> <p>(f) Պարտավորությունների կատարման թերացումը համարվում է չլուծված կամ</p>
--	--

<p>voting shares, by contract or otherwise;</p> <p>(f) a Default is outstanding or continuing until it has been remedied or waived by the Lender in writing;</p> <p>(g) any reference to "law" means any law (including, any common or customary law) and any treaty, constitution, statute, legislation, decree, normative act, rule, regulation, judgement, order, writ, injunction, determination, award or other legislative or administrative measure or judicial or arbitral decision in any jurisdiction which has the force of law in such jurisdiction;</p> <p>(h) any reference to a provision of law is a reference to that provision as from time to time amended or re-enacted;</p> <p>(i) a reference to a "person" includes any person, natural or juridical entity, firm, company, corporation, government, state or agency of a state or any association, trust or partnership (whether or not having separate legal personality) or two or more of the foregoing and references to a "person" include its successors in title, permitted transferees and permitted assigns; and</p> <p>(j) "including" and "include" shall be deemed to be followed by "without limitation" where not so followed.</p>	<p>շարունակական, քանի դեռ Փոխատուին գրավոր եղանակով այն չի շտկել կամ հրաժարվել,</p> <p>(g) հղումը «օրենքին» նշանակում է ցանկացած օրենք (այդ թվում՝ ցանկացած ընդհանուր կամ սովորութային իրավունք) և ցանկացած պայմանագիր, սահմանադրություն, կանոնադրություն, օրենսդրություն, հրամանագիր, նորմատիվ ակտ, կանոն, կանոնակարգ, դատարանի որոշում, պատվեր, ծանուցագիր, հրաման, որոշում, պարզև կամ այլ օրենսդրական և վարչական միջոցներներ, ցանկացած իրավազորության ներքո դատական կամ արբիտրաժային որոշում, որը տվյալ իրավազորության նորքո ունի օրենքի ուժ,</p> <p>(h) հղումը օրենքի դրույթին պետք է ընկալել որպես ժամանակ առ ժամանակ փոփոխված կամ վերստին ընդունված դրույթ,</p> <p>(i) հղումը որևէ «անձի» ներառում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ընկերություն, կորպորացիա, կառավարություն, պետություն, պետական գործակալություն կամ որևէ միավորում, տրեստ կամ ընկերակցության (անկախ իրավաբանական անձի կարգավիճակ ունենալու հանգամանքից) կամ վերոնշյալներից երկուսը և ավելին, և համարվում է հղում նաև այդ «անձի» իրավահաջորդներին և իրավունքները զիջելու ճանապարհով նրանից իրավունքներ ստացած անձանց,</p> <p>(j) «ներառում է» կամ «ներառյալ» բառերը պետք է մեկնաբանել այնպես կարծես, եթե դրանցից հետո գրված լիներ «սակայն ոչ միայն» արտահայտությունը, եթե այն նշված չէ:</p>
--	---

ARTICLE II – REPRESENTATIONS AND WARRANTIES

Section 2.01. Representations

The Borrower represents and warrants as follows on the date of this Agreement and on the date of each request for Disbursement:

(a) the Borrower is a closed joint stock company, duly incorporated and validly existing under the law of its jurisdiction of incorporation and it has the corporate power to own its assets and carry on its business as it is being presently conducted;

(b) the Borrower has the corporate power and authority to enter into, execute, deliver and perform this Agreement and any Project Agreement to which it is a party executed as of the date of this Agreement;

(c) this Agreement and any Project Agreements executed as of the date of this Agreement have been or (in the case of the Export Contracts) will be duly authorised and executed by the Borrower and constitute or (in the case of the Export Contracts) will constitute valid and legally binding obligations of the Borrower, enforceable in accordance with their respective terms, except as such enforceability may be limited by bankruptcy, insolvency, reorganization, moratorium or other laws relating to or affecting generally the enforcement of creditors' rights;

(d) the execution of this Agreement and the compliance with the terms hereof (when

ՀՈՂՎԱԾ II – ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍՏԻՔՆԵՐ

Կետ 2.01. Երաշխիքներ

Սույն Պայմանագրի կնքման օրվանից սկսած Փոխառուն հավաստում և երաշխավորում է հետևյալը՝

(a) Փոխառուն պատշաճ ձևով գրանցված և օրենսդրության համապատասխան գործող փակ բաժնետիրական ընկերություն է, որն ունի իր սեփական ակտիվները կառավարելու և իր կողմից ներկայումս ծավալվող գործունեությունը իրականացնելու կորպորատիվ լիազորությունները,

(b) Փոխառուն ունի սույն Պայմանագիրը և սույն Պայմանագրի օրվա դրությամբ իրականացվող ցանկացած Ծրագրային պայմանագիր կնքելու և դրանում սահմանված գործարքները կատարելու համար կորպորատիվ լիազորություններ,

(c) սույն Պայմանագիրը և սույն Պայմանագրի օրվա դրությամբ իրականացվող ցանկացած Ծրագրային պայմանագրի Փոխառուի կողմից լիազորված և իրականացված են եղել կամ կլինեն (Արտահանման պայմանագրերի դեպքում) և կազմում են կամ կկազմեն (Արտահանման պայմանագրերի դեպքում) Փոխառուի համար վավեր և իրավական պարտավորություններ, որոնք կգործեն ըստ համապատասխան պայմանների, բացառությամբ այն դեպքի, երբ դրանց հարկադիր կատարումը սահմանափակված կլինի սնանկությամբ, անվճարունակությամբ, վերակազմակերպմամբ, մորատորիումով կամ այլ օրենքներով, որոնք ազդեցություն կունենան վարկատուների իրավունքների վրա,

(d) Սույն Պայմանագրի կատարումը և սույն Պայմանագրի պայմանների հետ համապատասխանությունը (երբ բոլոր անհրաժեշտ լիազորությունները տրամադրված

<p>all necessary Authorisations are obtained):</p> <p>(1) will not result in violation of the Borrower's Charter or any provision contained in any law applicable to the Borrower;</p> <p>(2) will not conflict with or result in the breach of any provision of, or require any consent under, any material agreement or instrument to which the Borrower is a party or by which the Borrower or any of its assets is bound; and</p> <p>(3) will not constitute a default or an event which, with the giving of notice, the passage of time or the making of any determination, or any combination thereof, would become a default under any such material agreement or instrument;</p> <p>(e) the Borrower is not in default under any material agreement to which it is a party or by which it or any of its properties or assets is bound and there exists no Default;</p> <p>(f) to the best of its knowledge, the Borrower is in compliance with all laws applicable to it and presently in effect, including all applicable laws concerning money laundering except as would not reasonably be expected to result in a Material Adverse Effect;</p> <p>(g) no litigation, arbitration or administrative proceedings of or before any</p>	<p>են)՝</p> <p>(1) չի հանգեցնում Փոխառուի Կանոնադրության կամ Փոխառուի նկատմամբ կիրառվող օրենքի որևէ դրույթի խախտման,</p> <p>(2) չի հակասում որևէ նյութական պայմանագրի կամ գործիքի որևէ դրույթին, որի մի կողմն է հանդիսանում Փոխառուն կամ որի նկատմամբ Փոխառուն կամ իր ակտիվներից մեկը պարտավորություն ունի, կամ խախտում վերոնշյալը, կամ պահանջում որևէ համաձայնություն,</p> <p>(3) չի հանդիսանում պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպք կամ չի դատնում նման դեպք՝ հաշվի առնելով ծանուցումը կամ որոշումը կամ դրանք միասին, համաձայն նման նյութական պայմանագրի կամ գործիքի,</p> <p>(e) Փոխառուն չի թերացել որևէ պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման հարցում, որի կողմ է հանդիսանում ինքը կամ որը վերաբերում է Փոխառուին կամ նրա գույքին և ակտիվներին, և պարտավորությունների կատարման թերացման դեպք չկա,</p> <p>(f) իր տեղեկությամբ, Փոխառուն սույն Պայմանագրի շրջանակներում ներկայումս գործող և կիրառելի ոչ մի օրենք չի խախտել, այդ թվում՝ փողերի լվացմանն առնչվող որևէ օրենք, որը կարող էր ողջամտության սահմաններում ունենալ Անցանկալի էական ազդեցություն,</p> <p>(g) ոչ մի դատական, արբիտրաժային կամ վարչական վարույթ, դատարանի, արբիտրաժային մարմնի կամ գործակալության կողմից հարուցված վարույթ Փոխառուի նկատմամբ չի սկսվել կամ սպառնալիք չի եղել, որը կարող էր ողջամտության սահմաններում ունենալ Անցանկալի էական ազդեցություն,</p>
---	---

<p>court, arbitral body or agency which, if adversely determined, might reasonably be expected to have a Material Adverse Effect have been started or, to the knowledge of the Borrower, threatened against the Borrower.</p>	
---	--

<p style="text-align: center;">ARTICLE III – LOAN</p> <p>Section 3.01. Loan</p> <p>On and subject to the terms and conditions of this Agreement, the Lender agrees to lend to the Borrower an amount not to exceed EUR 51,000,000 (fifty one million Euros) consisting of:</p> <ol style="list-style-type: none"> (1) Portion I in an amount of EUR 22,000,000 (the “Portion I”); (2) Portion II in an amount of EUR 14,500,000 (the “Portion II”); and (3) Portion III in an amount of EUR 14,500,000 (the “Portion III”). <p>The Borrower and the Lender hereby acknowledge and agree that EUR 697,853.84 were already disbursed under Portion I of the Loan. The Borrower will however repay to the Lender an amount equal to EUR 51,000,000 in accordance with the terms of this Agreement.</p> <p>Section 3.02. Disbursement</p> <p>(a) Subject to fulfilment by the Borrower or waiver by the KfW (as the case may be) of the conditions set out under Article 3.3 of the 1st Loan Agreement, Article 3.5 of the 2nd Loan Agreement (as the case may be) and Section 4.01 and, as applicable, Section 4.02 during the Commitment Period, the Lender shall cause to be disbursed (by way of direct disbursement by the KfW) each Portion of the Loan pursuant to the terms of the relevant Loan Agreement and the Project Contract and such disbursement shall constitute a Disbursement under this Agreement.</p> <p>(b) The Borrower may request a Disbursement by submitting to the KfW</p>	<p style="text-align: center;">ՀՈԴՎԱԾ III – ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ</p> <p>Կետ 3.01. Փոխառություն</p> <p>Ըստ սույն Պայմանագրի ժամկետների և պայմանների, Փոխատուն համաձայնում է Փոխառուին տրամադրել 51,000,000 ԵՎՐՈ (հիսուն մեկ միլիոն Եվրոն) չգերազանցող գումարի փոխառություն, որը բաղկացած է լինելու՝</p> <ol style="list-style-type: none"> (1) I մաս- 22,000,000 ԵՎՐՈ («I մաս»), (2) II մաս - 14,500,000 ԵՎՐՈ («II մաս»), և (3) III մաս - 14,500,000 ԵՎՐՈ («III մաս»): <p>Փոխառուն և Փոխատուն սույնով հավաստում և համաձայնում են, որ 697,853,84 եվրո արդեն վճարվել է Փոխառության առաջին Մասով: Փոխառուն պետք է հատուցի Փոխատուին 51,000,000 Եվրո՝ համաձայն սույն Պայմանագրի պայմանների:</p> <p>Կետ 3.02. Փոխառության տրամադրում</p> <p>(a) Հաշվի առնելով Հանձնառության շրջանում Փոխառուի կողմից իրականացվող կամ KfW-ի կողմից</p>
---	--

(and providing a copy to the Lender) a request for disbursement in accordance with Article 3.1. of relevant Loan Agreement and the Project Contract.

(c) The Disbursement of Portion I shall be effected in accordance with the Disbursement Schedule set forth under Schedule A hereof. The Disbursements under Schedule A shall be made up to a maximum amounts determined for each half-year. To the extent the Borrower requests disbursement of lower amounts within any half-year the undisbursed amounts may be requested in the next ensuing half-years. With the exception of the last disbursement, the KfW shall not be obliged to effect disbursements in an amount of less than EUR 150,000.

(d) The Disbursement of Portion II shall be effected in accordance with the progress of the Project and upon request of the Borrower and confirmation of the KfW.

(e) The Disbursement of Portion III shall be effected in accordance with the performance of the supplies and services agreed upon in the Export Contract and confirmation of the KfW.

(f) Disbursements from Portion II and III of the Loan shall be made on a pro-rata basis.

(g) Notwithstanding anything provided hereunder, the Lender shall not be obliged to make any disbursements to the Borrower in the event the KfW refuses for any reason to make any disbursement under the Loan Agreements; provided that the Lender shall be in compliance with all applicable material provisions in each Loan Agreement and shall have satisfied each applicable condition precedent to such disbursement

մերժվող (կախված հանգամանքներից) 1-ին Փոխառության պայմանագրի 3.3 հոդվածում, 2-րդ Փոխառության պայմանագրի 3.5 հոդվածում (կախված հանգամանքներից), 4.01 կետում և, եթե կիրառելի է, 4.02 կետում սահմանված պայմանները՝ Փոխատուին վճարվում է (KfW-ից ուղղակի վճարման միջոցով) Փոխառության յուրաքանչյուր Մասը համաձայն համապատասխան Փոխառության պայմանագրի և Ծրագրի պայմանագրի, և նման վճարումը հանդիսանում է սույն Պայմանագրի համաձայն կատարված Վճարում:

(b) Փոխառուն կարող է դիմել Փոխառության տրամադրման համար՝ KfW-ին ներկայացնելով (և Փոխատուին պատճեն տրամադրելով) փոխառության տրամադրման հայտ համաձայն համապատասխան Փոխառության պայմանագրի 3.1. հոդվածի և Ծրագրի պայմանագրի:

(c) I մասի տրամադրումը կատարվում է ըստ սույն Պայմանագրի ժամանակացույց Ա-ում սահմանված Փոխառության տրամադրման ժամանակացույցի: Ժամանակացույց Ա-ում սահմանված հետվճարները կազմվում են՝ չգերազանցելով յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանված առավելագույն գումարները: Այն դեպքում, երբ Փոխառուն դիմում է ավելի քիչ տրամադրման համար, քան կիսամյակի համար սահմանված է, չհատկացված գումարների համար Փոխառուն կարող է դիմել հաջորդող կիսամյակների ընթացքում: Բացառությամբ վերջին տրամադրման, KfW-ն չի պարտավորվում կատարել 150,000 ԵՎՐՈ գումարից պակաս տրամադրում:

(d) II մասի տրամադրումը կատարվում է Ծրագրի իրականացմանը զուգահեռ, Փոխառուի դիմումի և KfW-ի կողմից հաստատման դեպքում:

in the applicable Loan Agreement and shall not have taken any action or failed to take any action resulting in such refusal of KfW to make disbursement under the applicable Loan Agreement except to the extent the underlying events causing the refusal of KfW to make such disbursement was solely outside the control of the Lender.

Section 3.03. Renouncement of Disbursement. Reduction of Project Costs

(a) Subject to fulfilment of its obligations under Article 11 of the 1st Loan Agreement, the Borrower may renounce the Disbursement of undisbursed amounts of Portion I with the consent of the KfW in exchange for the payment of the non-acceptance compensation pursuant to Section 3.05.(a).

(b) Subject to fulfilment of its obligations under Article 11 of the 2nd Loan Agreement, the Borrower may renounce the Disbursement of undisbursed amounts of Portion II.

(c) Subject to the KfW's consent and payment by the Borrower of non-acceptance compensation set forth under Section 3.05.(b), the Borrower may renounce the Disbursement of undisbursed amounts of Portion III.

Section 3.04. Suspension and Cancellation

(a) The Lender may, by notice to the Borrower and KfW, suspend or cancel the right of the Borrower to any Disbursement:

(1) if an Event of Default has occurred and is continuing;

(2) if any of the events provided under

(e) III մասի տրամադրումը կատարվում է Արտահանման պայմանագրում համաձայնեցված ապրանքների ու ծառայությունների կատարման և KfW-ի կողմից հաստատման համաձայն:

(f) Վարկի II և III մասերի տրամադրումները կատարվում են համամասնորեն:

(g) Առանց հաշվի առնելու սույն Պայմանագրում սահմանված որևէ դրույթ, Փոխատուն պարտավոր չէ Փոխառուին տրամադրել Փոխառությունը, եթե KfW-ն հրաժարվում է տրամադրել սույն Փոխառության պայմանագրում սահմանված գումարը, պայմանով, որ Փոխատուն համապատասխանում է Փոխառության պայմանագրի դրույթներին և բավարարել է սույն Պայմանագրում սահմանված Փոխառության տրամադրմանը նախորդող բոլոր պայմանները, և եթե Փոխատուն չի կատարել այնպիսի գործողություն, որը կհանգեցնեք KfW-ի կողմից Փոխառության տրամադրման մերժմանը կամ թերացել է կատարել գործողություն, որն էլ հանգեցրել է KfW-ի մերժմանը, բացառությամբ այնպիսի դեպքերի, որոնք հանգեցրել են KfW-ի կողմից Փոխառության տրամադրման մերժմանը այնպիսի պատճառով, որը գտնվել է Փոխատուի վերահսկողության սահմաններից դուրս:

Կետ 3.03. Փոխառության տրամադրումից հրաժարում. ծրագրի ծախսերի նվազեցում

Article 12.1 of the 1st Loan Agreement has occurred and is continuing (other than, in each case, any such event related solely to the Lender);

(3) if any of the events provided under Article 12.1 of the 2nd Loan Agreement has occurred and is continuing (other than, in each case, any such event relating solely to the Lender).

(b) Upon the issuance of the notice by the Lender in accordance with Section 3.04.(a), the right of the Borrower to further Disbursements shall be suspended or cancelled as indicated in the notice and the Borrower shall not have the right to issue any disbursement requests to the Lender and the KfW. The exercise by the Lender of the right to suspension shall not preclude the Lender from exercising its right to cancellation as provided under section 3.03.(a), either for the same or another reason, and shall not limit any other rights of the Lender under this Agreement.

Section 3.05. Charges, Commissions and Fees

(a) Subject to Section 3.03.(a), in the event the Borrower waives Disbursement of all or part of Portion I or if the Portion I is not disbursed at all or is not disbursed by the end of the Commitment Period other than for reasons for which KfW or the Lender can be held solely accountable, the Borrower shall promptly pay to the Lender upon its request such amount as is necessary for the Lender to fully pay the compensation to the KfW under Article 3.6. of the 1st Loan Agreement.

(b) Subject to Section 3.03.(c), in the event the Borrower waives Disbursement of all or part of Portion III or if Portion III is not disbursed by the end of the

(a) 1-ին Փոխառության պայմանագրի 11-րդ հոդվածի պարտականությունների կատարումը հաշվի առնելով՝ Փոխառուն կարող է հրաժարվել I մասի չտրամադրած գումարների ստացումից՝ KfW-ի համաձայնությամբ վճարելով 3.05.(a) կետի համաձայն սահմանված հրաժարման համար փոխհատուցումը:

(b) Կատարելով 2-րդ Փոխառության պայմանագրի 11-րդ հոդվածի պարտականությունները՝ Փոխառուն իրավասու է հրաժարվել II մասի չտրամադրած գումարի տրամադրումից:

(c) Հաշվի առնելով KfW-ի համաձայնությունը և Փոխառուի կողմից 3.05.(b) կետում նշված փոխհատուցման վճարումը, Փոխառուն կարող է հրաժարվել III մասի չվճարված գումարների վճարումից:

Կետ 3.04. Կասեցում կամ դադարեցում

(a) Փոխառուն կարող է, ծանուցելով Փոխառուին և KfW-ին, կասեցնել Փոխառուի որևէ Փոխառության որևէ մասի տրամադրման իրավունքը՝

(1) եթե տեղի է ունեցել պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպք և այն շարունակվում է,

(2) եթե տեղի է ունեցել 1-ին Փոխառության պայմանագրի 12.1 հոդվածում նշված դեպքերից որևէ մեկը և այն շարունակում է (յուրաքանչյուր հանգամանքի պարագայում, ոչ թե միայն Փոխառուին վերաբերող դեպք),

(3) եթե 2-րդ Փոխառության պայմանագրի 12.1 հոդվածում նշված դեպքերից մեկն է ի հայտ եկել և

<p>Commitment Period other than for reasons for which KfW or the Lender can be held solely accountable, the Borrower shall promptly pay the Lender upon its request such amount as is necessary for the Lender to fully pay the compensation to the KfW under Article 3.7. of the 2nd Loan Agreement.</p> <p>(c) [Reserved]</p> <p>(d) With respect to Portion I:</p> <p>(1) the Borrower will pay a non-refundable commitment of 0.25% per annum on so much of the Portion I of the Loan as has not, from time to time, been disbursed to the Borrower or cancelled;</p> <p>(2) the commitment fee shall accrue from day to day from the date of this Agreement and be due and payable on June 30 and December 30 of each year, provided however that the first commitment fee shall be paid on December 30, 2016. The commitment fee shall be calculated on the basis of the actual number of days elapsed in the relevant period and a 360-day year with 30-day months.</p> <p>(e) With respect to Portion II and Portion III:</p> <p>(1) the Borrower will pay a non-refundable commitment fee of 0.25% per annum on so much of the Portion II and Portion III of the Loan as has not, from time to time, been disbursed to the Borrower or cancelled;</p> <p>(2) the commitment fee shall accrue day to day from the date of this Agreement and will be due and payable as follows:</p> <p>(i) prior to the date of the first</p>	<p>շարունակում է լինել (յուրաքանչյուր հանգամանքի պարագայում, ոչ թե միայն Փոխատուին վերաբերող դեպք):</p> <p>(b) ըստ 3.04.(a) կետի Փոխատուի կողմից տրամադրվող ծանուցման դեպքում, հաջորդող փոխառության տրամադրումների նկատմամբ Փոխառուի իրավունքը կասեցվում է, ինչպես որ նշված է ծանուցման մեջ, և Փոխառուն իրավունք չի ունենում Փոխատուին և KfW-ին ներկայացնել փոխառության տրամադրման հայտ: Փոխատուի կողմից կասեցման իրավունքի գործարկումը չի գրկում Փոխատուին սույն Պայմանագրում սահմանված այլ իրավունքների կատարումից:</p> <p>Կետ 3.05. Վճարներ, միջնորդավճարներ և այլ վճարներ</p> <p>(a) Հաշվի առնելով 3.03.(a) կետը, եթե Փոխառուն հրաժարվում է I մասից ամբողջությամբ կամ մասամբ կամ եթե I մասն ընդհանրապես չի վճարվում կամ չի վճարվում մինչև Հանձնառության շրջանի ավարտը ելնելով այնպիսի պատճառներից, որոնց համար KfW-ն կամ Փոխատուն չեն կարող պատասխանատու լինել,</p>
---	--

<p>repayment instalment of Portion II and Portion III, on June 30 and December 30 of each year and the first payment date will be December 30, 2016;</p> <p>(ii) on the due date of the first repayment instalment of Portion II and Portion III such commitment fee shall be paid together with such instalment;</p> <p>(iii) thereafter on the further due dates of the repayment instalments pursuant to Section 3.07.(a).</p> <p>(f) The fees and other amounts referred to in this Section 3.05. are exclusive of any value added or other tax, which might be chargeable in connection with such fees and amounts. If any such value added or other tax becomes chargeable, the Borrower shall gross-up any such fee or amount and pay such value added or other tax to the Lender at the same time that the relevant fee or amount becomes due and payable.</p> <p>Section 3.06. Interest & Default Interest</p> <p>(a) In respect of Portion I of the Loan:</p> <p>(1) the Borrower shall pay interest on the principal amount of each Disbursement of Portion I outstanding at a rate equal to 3.24% per annum, which shall be charged from the date of the applicable Disbursement (exclusively) to the date that the repayment of such Disbursement is made (inclusively);</p> <p>(2) such interest shall be due and payable on June 30 and December 30 of each year.</p> <p>(b) In respect of Portion II of the Loan:</p>	<p>Փոխառուն վճարում է Փոխատուին պահանջի դեպքում այնպիսի գումար, որն անհրաժեշտ է Փոխատուին KfW-ին 1-ին Փոխառության պայմանագրի 3.6. հոդվածով սահմանված գումարը հատուցելու համար:</p> <p>(b) Հաշվի առնելով 3.03.(c) կետը, եթե Փոխառուն հրաժարվում է III մասից ամբողջությամբ կամ մասամբ, կամ եթե III մասն ընդհանրապես չի տրամադրվում մինչև Հանձնառության շրջանն, ելնելով այնպիսի պատճառներից, որոնց համար KfW-ն կամ Փոխատուն չեն կարող պատասխանատու լինել, Փոխառուն վճարում է Փոխատուին պահանջի դեպքում այն գումարը, որն անհրաժեշտ է, Փոխատուին KfW-ին 2-րդ Փոխառության պայմանագրի 3.7. հոդվածով սահմանված գումարը հատուցելու համար:</p> <p>(c) [Վերապահումներ]</p> <p>(d) I մասի հետ կապված՝</p> <p>(1) Փոխառուն կվճարի տարեկան 0.25%-ի չափով հետ չվերադարձվող հանձնառություն՝ Փոխառության I մասի այնքան գումարի վրա, որը ժամանակ առ ժամանակ չի տրամադրվել Փոխառուին կամ չի չեղարկվել,</p> <p>(2) հանձնառության գումարն օրեցօր կուտակվելու է սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, և վճարման ենթակա է լինելու յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին, և առաջին հանձնառության վճարը վճարվելու է 2016 թվականի դեկտեմբերի 30-ին: Հանձնառության վճարը կուտակվում է համապատասխան ժամանակահատվածում անցած օրերի փաստացի քանակի և 30-օրյա</p>
--	--

<p>(1) The Borrower shall pay interest on the principal amount of each Disbursement of Portion II outstanding at a rate equal to 0.75% per annum, which shall be charged from the date of the applicable Disbursement (exclusively) to the date that the repayment of such Disbursement is made (inclusively); and</p> <p>(2) Such interest shall be due and payable as follows:</p> <p>(i) prior to the date of the first repayment instalment of Portion II, on June 30 and December 30 of each year;</p> <p>(ii) on the due date of the first repayment instalment of Portion II such interest shall be paid together with such instalment;</p> <p>(iii) thereafter on the further due dates of the repayment instalments pursuant to Section 3.07.(a).</p>	<p>ամիսներով 360-օրյա տարվա հիման վրա:</p> <p>(e) II և III մասերի հետ կապված՝</p> <p>(1) Փոխառուն կվճարի տարեկան 0.25%-ի չափով հետ չվերադարձվող հանձնառություն՝ Փոխառության II և III մասերի այնքան գումարի վրա, որքան ժամանակ առ ժամանակ չի տրամադրվել Փոխառուին կամ չի չեղարկվել,</p> <p>(2) հանձնառության գումարն օրեցօր կուտակվելու է սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ի վեր և վճարման ենթակա է լինելու հետևյալ կերպ՝</p> <p>(i) Նախքան II և III մասերի մարման օրը՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին, փոխառության գումարի առաջին մարման ամսաթիվը կլինի 2016 թվականի դեկտեմբերի 30-ը,</p> <p>(ii) II և III մասերի փոխառության գումարի առաջին մարման օրը, տվյալ հանձնառության վճարը վճարվում է մարման գումարի հետ միասին,</p> <p>(iii) այնուհետև հաջորդ մարման ամսաթվերը լինում են ըստ 3.07.(a) կետի:</p>
<p>(c) In respect of Portion III of the Loan:</p> <p>(1) The Borrower shall pay interest on the principal amount of each Disbursement of Portion III outstanding at a rate equal to 4.12% per annum, which shall be charged from the date of the applicable Disbursement (exclusively) to the date that the repayment of such Disbursement is made (inclusively); and</p> <p>(2) Such interest shall be due and payable as follows:</p> <p>(i) prior to the date of the first repayment instalment of</p>	<p>(f) Վճարները և 3.05. կետում սահմանված այլ գումարները ազատված են ավելացված արժեքի հարկից կամ այլ հարկից, որը պետք է գանձվեր այդ վճարների և գումարների հետ միասին: Եթե ավելացված արժեքի հարկ կամ այլ հարկատեսակ գանձման ենթակա է դառնում, Փոխառուն միավորում է ցանկացած նման վճար կամ գումար և վճարում է ավելացված արժեքի հարկ կամ այլ հարկատեսակ KfW-ին այն ժամանակ, երբ համապատասխան վճարը կամ</p>

<p>Portion III, on June 30 and December 30 of each year;</p> <p>(ii) on the due date of the first repayment instalment of Portion III such interest shall be paid together with such instalment;</p> <p>(iii) thereafter on the further due dates of the repayment instalments pursuant to Section 3.07.(a) hereof.</p> <p>(d) [Reserved];</p> <p>(e) If the Borrower fails to pay when due any repayment instalment payable by it under this Agreement, the overdue amount shall bear interest at a rate per annum equal to the sum of (i) 3%, and (ii) Base Rate as provided under Article 7.5. of each of the Loan Agreements.</p> <p>(f) In addition to the remedies available to the Lender under this Agreement, if the Borrower fails to pay when due any amount (other than any repayment instalment or any voluntary prepayment) payable by it under this Agreement, the Borrower shall, at the Lender's request pay a lump-sum compensation to KfW equal to the sum of (i) 3%, and (ii) Base Rate as provided under Article 7.6. of each of the Loan Agreement for the period beginning on the due date and ending on the date of payment of such overdue amounts. The Borrower shall be free to prove that no damage was in fact incurred or that the damages were not incurred in the amount as stated.</p> <p>(g) All interest shall be calculated on the</p>	<p>գումարը վճարման ենթակա է դառնում:</p> <p>Կետ 3.06. Տոկոսադրույք և տույժեր</p> <p>(a) Փոխառության I մասի հետ կապված՝</p> <p>(1) Փոխառուն վճարում է I մասի յուրաքանչյուր Վճարման չմարված մայր գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք, տարեկան 3.24%-ի չափով, որը վճարվում է Փոխառության տրամադրման օրվանից սկսած (չհաշված այդ օրը) մինչև այդ փոխառության մարման օրը (ներառյալ),</p> <p>(2) այդ տոկոսադրույքը վճարվում է յուրաքանչյուր տարի հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին:</p> <p>(b) Փոխառության II մասի հետ կապված՝</p> <p>(1) Փոխառուն վճարում է II մասի յուրաքանչյուր Վճարման չմարված մայր գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք, տարեկան 0.75%-ի չափով, որը վճարվում է Փոխառության տրամադրման օրվանից սկսած (չհաշված այդ օրը) մինչև այդ փոխառության մարման օրը (ներառյալ),</p>
--	--

basis of the actual number of days elapsed and a 360-day year with 30-day months.

Section 3.07. Repayment and Prepayment

(a) The Borrower shall repay each Portion of the Loan in accordance with the Repayment Schedule.

(b) Undisbursed amount of any Portion of the Loan will be credited in equal proportions against all outstanding repayment instalments of such Portion unless the Lender at its own discretion determines a different offsetting mode in a particular case.

(c) If any Portion of the Loan is disbursed after its respective repayment period has started this will not affect the Repayment Schedule of such Portion so long as the repayment instalment due under the Repayment Schedule at any time is lower than the Loan amount outstanding under the respective Portion. If the repayment instalment due for payment exceeds the outstanding loan amount, the Lender will deduct the amount equal to the difference from the repayment instalment due, divide it by the remainder of the repayment instalments still outstanding, and add this sum to each outstanding repayment instalment. The Lender reserves the right to postpone taking disbursements into consideration that are made within 45 days prior to the respective interest payment date for the determination of the outstanding Loan amount until the second payment date following the disbursement.

(d) The following will apply to prepayments:

(2) այդ տոկոսադրույքը վճարվում է հետևյալ կերպ՝

(i) Ը մասի առաջին մասնաբաժնի մարման օրվանից առաջ, յուրաքանչյուր տարի հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին:

(ii) Ը մասի առաջին մասնաբաժնի մարման օրը այդ տոկոսադրույքը վճարվում է մարվող գումարի հետ միասին,

(iii) այնուհետև հաջորդ մարման գումարների ամսաթվերը ըստ սույն Պայմանագրի 3.07.(a). կետի:

(c) Փոխառության Ը մասի հետ կապված՝

(1) Փոխառուն վճարում է Ը մասի յուրաքանչյուր րամադրվածփոխառության չմարված մայր գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույք, տարեկան 4.12%-ի չափով, որը վճարվում է Փոխառության տրամադրման օրվանից սկսած (չհաշված այդ օրը) մինչև տվյալ փոխառության մարման օրը (ներառյալ), և

(2) Այդպիսի տոկոսադրույքը ենթակա է

<p>(1) the Borrower may subject to the sub-paragraphs (2) to (6) below effect a prepayment with respect to a Loan amount provided that such prepayment shall be at least in the amount of one repayment instalment pursuant to Section 3.07.(a);</p> <p>(2) a prepayment of a Loan amount pursuant to Section 3.07.(d)(1) is subject to notification of the prepayment by the Borrower (with copy to and on behalf of the Lender, as borrower under the Loan Agreements) to KfW no later than on the fifteenth Banking Day in Armenia prior to the intended prepayment date. Such notice is irrevocable; it must specify the date on which the prepayment is to be made and the amount thereof and obligates the Borrower to pay to the Lender the stated amount on the stated date;</p> <p>(3) if the Borrower prepays any Loan amount bearing interest at a fixed interest rate the Borrower must immediately pay to the Lender (for payment to KfW) upon request such amount as is necessary to compensate for any losses, expenses or costs incurred by the KfW as a result of the prepayment pursuant to Section 6.4(c) of the 1st Loan Agreement or Section 6.5(e) of the 2nd Loan Agreement, as applicable. The KfW will determine the amount of the prepayment compensation and the Lender will communicate it to the Borrower;</p> <p>(4) the Borrower will also pay the following amounts together with the prepayment pursuant to Section 3.07(d)(1) to (3):</p> <p>(i) all interest accrued on the prepaid Loan amount up until the date of the</p>	<p>վճարման հետևյալ կերպ՝</p> <p>(i) III մասի առաջին մասնաբաժնի մարման օրվանից առաջ, յուրաքանչյուր տարի հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին,</p> <p>(iii) III մասի առաջին մասնաբաժնի մարման օրը տվյալ շահադրույքը վճարվում է տվյալ մասնաբաժնի հետ միասին,</p> <p>(iii) այնուհետև մարման հաջորդ մասնաբաժինների ամսաթվերը ըստ սույն Պայմանագրի 3.07.(a). կետի:</p> <p>(d) [Վերապահումներ]՝</p> <p>(e) Եթե Փոխառուն չի կատարում որևէ մասնաբաժնի հետվճարը սույն Պայմանագրի համաձայն, ժամկետանց գումարի վրա կիրառվում է տոկոսադրույք տարեկան (i) 3%-ի չափով, և (ii) հիմնական տոկոսադրույք ըստ Փոխառության պայմանագրի 7.5. հոդվածի:</p> <p>(f) Ի հավելումն սույն Պայմանագրով սահմանված Փոխատուի համար հասանելի իրավական պաշտպանության միջոցների, եթե Փոխառուն չի վճարում պարտադիր վճարման ենթակա որևէ գումար (բացառությամբ հետվճարման հերթակա գումարի կան</p>
---	---

<p>prepayment.</p> <p>(5) Section 3.07.(b) will apply mutatis mutandis to the offsetting of prepayments.</p> <p>(e) In the event that Section 3.07.(b), (c) or (d) applies, the Lender shall deliver to the Borrower a revised repayment schedule that will become an integral part of this Agreement and will replace the repayment schedule valid until such time.</p> <p>(f) Amounts of the Loan prepaid may not be reborrowed.</p> <p>(g) Notwithstanding anything provided hereunder, the Borrower may satisfy any requirements to make payments pursuant to this Agreement by making such payment directly to the KfW (with a concurrent written notice to Lender of such payment) with an indication that the payment is made on behalf of the Lender. The Lender hereby agrees that any action, decision or determination by it pursuant to this Section 3.07. shall be taken or made to the extent such action, decision or determination is taken or made by KfW under the corresponding provision in the applicable Loan Agreement.</p>	<p>վաղակետ մարման դեպքերի), որը ենթակա է վճարման համաձայն</p> <p>սույն Պայմանագրի, Փոխառուն պարտավորվում է, Փոխատուի պահանջի դեպքում, վճարել միանվագ փոխհատուցում KfW-ին, որը կազմում է (i) 3% տոկոսադրույք, և (ii) Հիմնական տոկոսադրույք, ինչպես որ սահմանված է Փոխառության պայմանագրերից յուրաքանչյուրի 7.6. հոդվածում, հետվճարման ամսաթվից սկսած մինչև ժամկետանց գումարների մարման ամսաթիվը: Փոխառուն իրավունք ունի ասու է ապացուցել, որ ոչ մի վնաս իրականում չի հասցվել կամ, որ վնասները չեն կազմել նշված գումար:</p> <p>(g) Բոլոր տոկոսադրույքները հաշվարկվում են փաստացի քանակի և 360-օրյա տարին 30-օրյա ամիսներով հաշվարկի հիման վրա:</p>
<p>Section 3.08. Payments, Insufficient Payments, Taxes & Unwinding Costs</p> <p>(a) Payments due to the Lender under this Agreement shall be made in EUR, in immediately available funds, in such place as the Lender designates.</p> <p>(b) The computation by the Lender of interest, charges, commissions, fees and</p>	<p>Կետ 3.07. Փոխառության գումարի մարում և վաղակետ մարում</p> <p>(a) Փոխառուն մարում է Փոխառության յուրաքանչյուր Մասը ըստ Հետվճարման ժամանակացույցի՝</p> <p>(b) Փոխառության որևէ Մասի չտրամադրած գումարը կհաշվանցվի հավասարաչափ բաշխումով բոլոր տրամադրած Փոխառության գումարների հետվճարման մասնաբաժինների հետ, եթե Փոխատուն իր հայեցողությամբ չի սահմանում հաշվանցման այլ կարգ յուրաքանչյուր դեպքի համար:</p> <p>(c) Եթե Փոխառության որևէ Մաս տրամադրվում է</p>

other amounts due shall be final, conclusive and binding on the Borrower unless shown by the Borrower to the reasonable satisfaction of the Lender to contain error.

(c) If the due date for any payment under this Agreement would otherwise fall on a day, which is not a Banking Day, then such payment shall instead be due on the next succeeding Banking Day in the same calendar month or, if there is no succeeding Banking Day in the same calendar month, the immediately preceding Banking Day.

(d) If the Lender (or KfW, for payments made directly to KfW) at any time receives less than the full amount then due and payable to it under this Agreement, the Lender shall have the right to allocate and apply the amount received in any way or manner and for such purpose or purposes under this Agreement as the Lender in its sole discretion determines, notwithstanding any instruction that the Borrower may give to the contrary.

(e) The Borrower shall indemnify the Lender against any losses resulting from a payment being received, or a claim being filed or an order or judgment being given, hereunder in a currency or place other than the currency and place specified in Section 3.08(a). The Borrower shall pay such additional amount as is necessary to enable the Lender to receive, after conversion to such currency at a market rate and transfer to such place, the full amount due to the Lender hereunder in the currency and at the place specified in Section 3.08(a).

(f) The Borrower shall pay or cause to be paid, or reimburse the Lender on demand for, all present and future taxes, duties,

այդ մասի հետվճարման ժամանակահատվածի սկսվելուց հետո, այն որևէ փոփոխություն չի առաջացնի հետվճարման ժամանակացույցում, եթե հետվճարման ժամանակացույցով սահմանված հերթական հետվճարը ավելի փոքր է, քան մարման ենթակա փոխառության մասի ամբողջ մնացորդային գումարը : Եթե հետվճարման ժամանակացույցով սահմանված հերթական հետվճարը ավելի մեծ է փոխառության մնացորդային գումարից, Փոխատուն նշված հետվճարից հանում է տարբերություն կազմող գումարը, բաժանում է այն դեռ չմարված հետվճարների գումարի վրա և ավելացնում այդ հետվճարները այդքան գումարի չափով: Փոխատուն իրավունք ունի հետաձգել տրամադրված այն փոխառության մասերի գումարների հաշվի առնելը մնացորդային փոխառության գումարի հաշվարկում, որոնք տրամադրվել են հերթական տոկոսադրույքի վճարման ամսաթվից առաջ 45 օրվա ընթացքում, մինչև տրամադրումից հետո հերթական երկրորդ հետվճարման ամսաթիվը: Ը

(d) Վաղակետ մարման դեպքում կիրառվում է հետևյալը՝

(1) Փոխառուն կարող է վճարել ներքոհիշյալ ենթապարբերություններ (2)-ից (6)-ում նշված Փոխառության գումարը վաղակետ մարել՝ պայմանով, որ սվյալ վաղակետ մարման գումարը լինի առնվազն 3.07.(a) կետի համաձայն կատարվող փոխառության գումարի մեկ հետվճարման գումարի չափով,

(2) Փոխառուն պարտավոր է համաձայն 3.07.(d)(1) կետի ծանուցել KfW-ին վաղակետ մարման մասին (պատճենը ուղարկելով Փոխատուին Փոխատուի անունից, որը Փոխառու է Փոխառության Պայմանագրերով) վաղակետ մարման նախատեսվող

fees and other public charges, levied or imposed, on or in connection with the payment of any amounts due to the Lender under this Agreement.

(g) All payments of principal, interest and other amounts due to the Lender under this Agreement shall be made free and clear of, and without deduction or withholding for or on account of, any taxes, duties, fees or public charges; provided, however, that, if the Borrower is prevented by operation of law or otherwise from making such payments free and clear of such deductions or withholdings, the amount due under this Agreement shall be increased to such amount as may be necessary to remit to the Lender the full amount it would have received had such payment been made without such deductions or withholdings.

(h) It is understood and agreed that no such amounts payable by the Borrower to the Lender under this Section 3.08 shall exceed such amounts payable by the Lender to KfW under the corresponding provisions in the applicable Loan Agreement.

ARTICLE IV – CONDITIONS PRECEDENT

Section 4.01. Disbursements of the Loan

The obligation of the Lender to make any Disbursement of the Loan is subject to the fulfilment of the following conditions precedent:

(a) **Loan Agreements.** The conditions precedent under the 1st Loan Agreement and the 2nd Agreement, as the case may be, have been satisfied in connection with the respective terms of the 1st Loan Agreement

ամսաթվից ոչ ուշ, քան տասնհինգ բանկային օր առաջ: Տվյալ ծանուցումը անհետկանչելի է. ծանուցման մեջ նշվում է վաղակետ մարման ամսաթիվը և գումարը, և պարտավորեցնում է Փոխառուին մարել Փոխատուին նշված գումարը մշված ամսաթվին,

(3) եթե Փոխառուն վաղակետ մարում է Փոխառության գումարը, որի համար ամրագրված է տոկոսադրույք, Փոխառուն անմիջապես ,պահանջի դեպքում, պետք է հատուցի Փոխատուին (KfW-ին հատուցելու համար), KfW-ի կողմից կրած կորուստները, ծախսերը, որոնք առաջացել են համաձայն Փոխառության պայմանագրի 6.4(c) կետի կամ 2-րդ Փոխառության պայմանագրի 6.5(e) կետի վաղակետ մարման հետևանքով: KfW-ն որոշում է վաղակետ մարման փոխհատուցման գումարի չափը, և Փոխատուն այդ տեղեկությունը տրամադրում է Փոխառուին՝

(4) Փոխառուն.07(d)(1) կետից մինչև (3) կետով նախատեսված վաղակետ մարման գումարի հետ մեկտեղ վճարում է նաև հետևյալ գումարները Յը՝

(i) մինչև վաղակետ մարման ամսաթիվը Փոխառության վաղակետ մարման գումարի վրա կուտակված տոկոսադրույքը,

(5) 3.07.(b) կետը կիրառվում է հաշվի առնելով այն փոփոխությունները, որոնք կապված են վաղակետ մարման հաշվանցման հետ::

and/or the 2nd Loan Agreement as the case may be.

